

Մ.Հ.Մ.Հ.Կ.



C.A.R.P.S.

ՄԱՍԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՄԵՎԱՆԱ ԼՃԻ ՍՏՈՐՋՐՅԱ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԻՏԱՐՇԱՎ
16-23 հուլիսի, 2014 թ.

Սևանա լճի ստորջրյա ավազանի հինգերորդ գիտահետազոտական արշավը տեղի կունենա 2014 թ. հուլիսի 16-ից 23-ը և ըստ էության հանդիսանում է 2010, 2011, 2012, 2013 թթ-ին կատարված աշխատանքների շարունակությունը, որոնց արդյունքները բավականին հուսադրող էին հայ գիտնականների համար: Ֆրանս-հայկական այս առաքելությունն իրականացվում է ծրագրի երկու դեկավարների՝ Կլոդ Թուլումջանի (նախաձեռնող) և Ստեփան Կոչայանի կողմից՝ ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիային կից գիտահետազոտական ինստիտուտների, Երևանի Պետական Համալսարանի դասախոս-գիտաշխատողների, ինչպես նաև «Սևան Ազգային պարկի» և այլ պետական մարմինների սերտ համագործակցությամբ, որոնք աշխատում են Սևանա լճին առնչվող հարցերի շուրջ:

Այս առաքելությունն անցյալ տարվանից իրականացվում է Ստորջրյա հետազոտությունների և սուզումների հայկական կենտրոնի (ՄՀՄՀԿ - հայկական ընկերակցություն՝ հիմնադրված 2011 թ. վերջին) պատասխանատվության ներքո՝ նախագահ Կլոդ Թուլումջանի և փոխնախագահ Արա Ավագյանի գլխավորությամբ (ՄՀՄՀԿ նպատակները ներկայացվում են առանձին): ՄՀՄՀԿ-ը Հայաստանում միակ ակումբն է, որն ամբողջապես նվիրված է ջրային սուզումներին և Հայաստանում այս ոլորտի զարգացմանը:

Այս առաքելությունն իրականացվում է ՀՀ-ում Ֆրանսիայի դեսպանության աջակցությամբ:

Այս տարի առաքելության նպատակն է ընդլայնել ստորջրյա հետազոտությունների շրջանակը՝ դեպի դեռևս անձանոթ վայրեր: Պետք է հիշել, որ մինչ օրս Սևանա լճի մեծ մասն ուսումնասիրված չէ սուզորդների կողմից:

Ուսումնասիրության ավարտին ստացված արդյունքները (լուսանկարներ, տեսաֆիլմեր, նմուշներ) կտրամադրվեն հայ գիտնականներին՝ ներառյալ այն արդյունքները, որոնք անմիջականորեն կապված են քաղցրահամ ջրի այս ջրամբարի էկոլոգիական հավասարակշռության հետ, որն ունի ազգային ռազմավարական մեծ նշանակություն և հատկապես տարածաշրջանային կարևորություն:

Ստորջրյա Հետազոտությունների և Սուզումների Հայկական Կենտրոն (ՄՀՄՀԿ)

Ստորջրյա Հետազոտությունների և Սուզումների Հայկական Կենտրոն (ՄՀՄՀԿ)

Centre Arménien de Recherches et de Plongées Subaquatiques (CARPS)

ONG non lucrative, de droit arménien, enregistrée le 07/03/2012 sous le n° 211.171.75452 – CODE 41628742

Մ.Հ.Մ.Հ.Կ.



C.A.R.P.S.

Հայաստանում աստորջրյա սուզումների փորձը խրախուսելու նպատակով ՄՀՄՀԿ-ն 2014 թ. **հուլիսի 20-ին ժամը 10:00** հրավիրում է բոլոր ցանկացողներին կատարելու սուզորդային մկրտություն Սևանա լճում : Այս սուզման նախաձեռնությունն ունի մի քանի նախապայման : Մասնակցության տեղերը սահմանափակ են, ինչի համար անհրաժեշտ է նախապես գրանցվել՝ ուղարկելով նամակ lusinetoroyan@gmail.com էլ. Հասցեով և թողնել Ձեր ազգանունը, անունը, ծննդյան տարեթիվը, հասակը, քաշը, կոշիկի չափսը և հեռախոսահամարը: Կընդունվեն առաջին 20 արձագանքողները: Յուրաքանչյուր թեկնածու միննույն օրը **կանցնի թեստավորում՝ 50 մ հեռավորության վրա լող՝** լաստերով, դիմակներով և շնչառական ապարատներով, որոնք կտրամադրվեն անհրաժեշտության պարագայում:

Մյուս կողմից, տարված աշխատանքներից հետո տեղի ազգաբնակչությունն ավելի տեղեկացված կլինի Սևանա լճի մասին, ինչպես նաև նյութեր կտրամադրվեն թանգարաններին՝ մասնավորապես Սևան Ազգային Պարկի թանգարանին, որն աջակցում է մեր գիտարշավների իրականացմանը :

Նախնական արդյունքները կամփոփվեն մամուլի ասուլիսի ժամանակ, որը տեղի կունենա գիտարշավի ավարտին:

Տեղեկությունների համար դիմել՝

- | | |
|------------------|--|
| Էլլինա Հովսեփյան | (+374) 098.80.60.14 – ellina_99@yahoo.fr |
| Լուսինե Թորոյան | (+374) 091.72.12.07 – lusinetoroyan@gmail.com |
| Արա Նավոյան | (+374) 093.13.19.80 – avagn@yahoo.fr |
| Ստեփան Կոչայան | (+374) 098.42.39.59 – stephane.kojayan@hotmail.fr |
| Կլոդ Թուլումջյան | (+374) 077.105.109 – touloumdjian.cl@wanadoo.fr |

Ստորջրյա Հետազոտությունների և Սուզումների Հայկական Կենտրոն (ՄՀՄՀԿ)
Ստորջրյա Հետազոտությունների և Սուզումների Հայկական Կենտրոն (ՄՀՄՀԿ)

Centre Arménien de Recherches et de Plongées Subaquatiques (CARPS)
ONG non lucrative, de droit arménien, enregistrée le 07/03/2012 sous le n° 211.171.75452 – CODE 41628742